

Մասնավոր յայտարարություն չափել տուողը պիտի վճարել 10
հատարակ տոտի համար 1 կռպիկ արծաթ: Ցայտարարությունները
տպվում են Հայերեն, Ռուսերեն, ^{անգլ} Գրայիերեն, Ֆրանսիայիեն, Գերմա-
ներեն և Թուրքերեն:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Մեր ամենահալալ համարուած անձանց որ Բա

մատարար թանգ են: Բայց այնու ամենայնիս թիֆլիսի մէջ արդիւնաբերված մոմի զինը գրեթէ չէ գտնադնւում Ռուսաստանից բերվող մոմի գնից:—այն է 11 ռ. 50 Կ.:

Ուրեմն առնողները շահվում են Փունտի վերա՝ 3/4 Կ. կամ փոքր ինչ աւելի: Կարծիքով զործարանատերին բացի արդիւնաբերութեան ծախսերից, և դարսելու և ճանապարհի և խանութի պահելու ծախսերը, որոնք խկապէս չկան, որովհետեւ մոմը թիֆլիսում է արդիւնաբերվում և այդ գնով ծախվում է գործարանում: Ինչէ շահվում ուրեմն հասարակութիւնը մեր երկրի մէջ գործարան հիմնելուց:—Աչնչ: Մշակները, որոնց ձեռներով կատարվում են բոլոր աշխատութիւնները նմանապէս չեն բան ևս ստանում:

Այնքան է, որ բոլոր շահը գումարատերի, հիմնողի գրգռան է մտնում:

Մեր ոչինչ չէինք ասելու մեր գործարանների արդիւնաբերութեան դէմ, եթէ նորա մտցնելը երկրի մէջ պիտի բարձրէր աշխատողների դրութիւնը, բայց ոչ թէ լինէր գրամատերերի այնպէս էլ (ուրիշ աշխատանքով) լի գրգռանքը: Պարտ յօդվածներից մինում մենք կաշխատենք ցոյց տալ թէ կարելի է հիմնել գործարանը որի կազմութիւնը և գործարանի և աշխատողի համար օգուտ կ'երկրի, իսկ այժմ կ'բաւականանք աւելացնելով թէ մենք մեծ մասամբ հոգում ենք մեր մասին, հոգում ենք մեր անձնական շահերի և հարստանալու մասին, գործ չենք անում ամեն տեսակ միջոցները: Մեր հիմնում ենք փարբիկաները, գործարանները բազմացնում ենք մշակների թիւը, և հոգալով նոցանի թախան ապահովութեան վերա և մուսնում ենք կամ չենք իմանում: որ սորանով պարտատուներ մեզ ապագայի համար այնպիսի անյաղթելի արգելքները, որոնք Եւրոպայի գումարատէր հասարակութեան համար պատճառ են դառնում անլուծելի և արիւնահեղ խնդիրների:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐՈՅԻ ԸՆՅՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներսիսեան դպրոցի կանոնադրութեան գործութեամբ հոգաբարձուներին, 12 թուով ընտրվում են պատգամաւորները չորս տարով: Պատգամաւորները իրանց կողմից իւրեքամսիւր եկեղեցւոյ 3 մարդ ընտրվում են ժողովրդից: Ուրեմն պատգամաւորների ընտրութեանց կախված է ինչ տեսակ մարդիկ ուսումնարանի հոգաբարձուներ կընտրվին: Այդ հոգաբարձուներից դարձնալ կախված է տեսակ ընտրութիւնը:

Ամեն երկիրներում ժողովուրդը միշտ ընտրում է իրանցից բարձր անձերին, մեծ մասամբ հոգաբարձուները հասարակութեան մէջ որ և է քանակ յայտնվեցան, որոնք նշանակութիւն ունին: Այդ յատկութիւնը ունի ամեն անկ ժողովուրդը:—Նմանապէս մեզ մօտ: Միայն թէ մեզ մօտ հասարակական կեանքը դարգացած չէ լինելով, ժողովուրդը երկրպագութեան մէջ է շատ անգամ ում պիտի ընտրի, կամ աւելի լաւ ասեմ, հազիւ տեսնելով հասարակութեան մէջ որ և է հասարակական գործունէութեամբ իրանց յայտնվող անձերին, ստիպված է նոցա համարել նշանակութիւն ունեցող անձերը, որոնցից որ և է կիրպով բարոյապէս ևս իւ վաճ է:—Այնչէս ընտրվում տարան կամ նման, հարցնելու լինէր դուք ժողովրդից:—չը դիտեմ, կը հիշատակեմ: ձեռք ժողովուրդը քննարկած մարդը ինչ է արել, ինչով է յայտնվել ինչ հասարակական ծառայութիւն է արել:— Բայց շատ կան անդեօք մեղանում մարդիկ, որոնք գործ են չնում, որոնք մի որ և է նշանաւոր գործունէութեամբ յայտնվել են, կը պատմութեան ևս ժողովրդի տեղը: Այս, շատ փոքր թիւը հազիւ թէ 12 հատ գտնվեն: . . . Ժողովուրդը համարացում է թիւն չունի, թէ կարելի է բան չնեն յայտնվել ինչ նշանաւոր գործով, որովհետեւ իր աչքի առաջ չենք տեսնում ժողովուրդի մարդ: Որքան ընտրվում են աստիճանի համար:—Նորան փողի համար, երբ որքան, որովհետեւ կախված են նորանից, չարորդ լին, որովհետեւ եկեղեցու երկրպագող ասեւ է, որ պիտի ընտրեն: . . . և այն իսկ աշխատող գործ

չնող անձինք քիչ են, և եթէ կան, շատ անգամ ոչ անուն, ոչ նշանակութիւն, ոչ փող, ոչ աստիճան ունին:

Ասենք հոգաբարձուները ընտրվեցան: Այժմ նորա պիտի ընտրեն տեսչին: Այդտեղ սկսվում է հակառակ գործողութիւն: Այնտեղ եղել է հպատակութիւն, զուգէ երկիւղ:—պիտեղ ոյժ, բարեկամութիւն, հովանաւորութիւն, պրօտէկցիա է դեր խաղում:

Ամեն դիտման պաշտօն վարելու համար հարկաւոր է մրցութիւն, փորձ, հարցաքննութիւն:

Բայց իսկի անում ենք այդպէս: Փոխանակ առաջարկել մրցութիւն, կոնկուրս, պահանջել տեսչութեւ ուղղութեամբ մեռնին:—տեսչի ընտրութեան մէջ հոգաբարձուները զանազան ուրիշ դրացունքներին: Մեր աչքի առաջ ունի իւրեքամսիւր, միւսը այն մարդին է ընտրում, որի վրա կարող է ազդեցութիւն ունենալ, կամ այն անձին որի ազդեցութեան տակ ինքն է գտնվում:

Պատգամաւորները չը պէտք է մոռանան թէ ընտրվում են հոգաբարձուներին, որոնց չորս տարվայ միջոցում, կարելի է ասել, մեր միակ միջին կարգի ուսումնարանի վիճակի է յանձնվում:

Հասարակութիւնը չը պէտք է մոռանայ, որ այս ուսումնարանը պատրաստում է մեր ժողովրդի համար քահանաներ և ուսուցիչներ, մի խօսքով Ներսիսեան ուսումնարանի ձեռքում է ժողովրդի կրթութիւնը: Ընտրողները չը պիտի մոռանան որ պատգամաւորների, յետոյ հոգաբարձուների, վերջը և տեսչի օրինակը ընտրութեանց կախված է ուսումնարանի դրութիւնը, աշակերտների ուղղութիւնը, այն աշակերտների, որոնք ժողովրդի ուսուցիչն են, այսինքն քահանաներ և տարական ուսումնարանի վարժապետն ևս պիտի դառնան:

Ուրեմն հոգաբարձուները պիտի այնպիսի մարդիկ լինեն, որոնք հասկանում են ինչ ուղղութիւն տան և իրանց կողմից ինչ տեսչին ընտրեն, որը իր կողմից նոր սերունդի թնայն գործութեանը քաջապահ և մտաւոր ուղղութիւն տայ, որը կը յարմարվի իրանց դպրոց հասարակական պաշտօնին:

Կարելի է յոյս ունենալ, որ այս 1872 թուին մեր հասարակական կարծիքը փոքր ինչ կըրթվէ:

ՆԱԽԱԿ ԱՅՍԻՑԱՅԻՑ*)

Այսպիսով մեր համազգի եղբայր թիւր հասում է մինչև 16,000 հոգի: Սորա ճանկատանի էրդուրում և Պայտուրթ քաղաքներից 1830 թուին դէպի Ռուսաստան գաղթաց 90,000 հայերի մի մասն են կազմում: Այդքան իշխանութիւնը Այսպիսով զաղթուածների համար նշանակած էր թիֆլիզու այժմեան «Նեմեցկայա Կոլոնիա» կոչւած արւարձանը, բայց ժողովուրդը զանազան պատճառներով չէ կամեցել այն տեղը և իւր բնակութիւնը հաստատել է Այսպիսով միջին Ցափարակ գետի եղերքում, ուր 12—15 հայ երեկ գերակատան կայ եղել տաճկաց ժամանակից: Ցափարակ գետը Այսպիսյան երկու մաս է բաժնում հին քաղաք և նոր քաղաք: Հին քաղաքում բնակուում են շրջաք 1500 թուով, Վրացիք 200 թուով կաթօլիկներ 1800 թուով և բաւական հայ գերդաստան, որոց թիւը միայնքած է նոր քաղաքի հայերի թուի հետ: Այս մասում գտնուած չինութիւնները ասիական չինութեան տարին են, տըներն չինուած են անկարգ և անկեանք կերպով, փողոց էլ եթէ կայ այնքան նեղ և ծուռուածոր որ անցնողը չէ գիտում ոտակից եկաւ և հըր է դընում: Սովորաբար մէկ տան կտորը մին ուրիշ տուն է կազմում: Այս մասը առհասարակ կեղատու և միջնորդը ապականող մասն է քաղաքի: Բարձր ժայռերի վերայ գետի եղերքում այս տեղ գտնուում է և Այսպիսյան բերդը: Նոր մասում բնակում են հայերը և հայ կաթօլիկները: Վերջիններին թիւը հասնում է 500 հոգի: Շինութիւնները այստեղ ևս ըստ մեծ թւի մասին ասիական ճարտարութեամբ են: Բայց ասելու կանոնաւոր, փողոցները ընդարձակ, զրեթէ ամէն տուն ունի իւր մեծ կամ փոքր պորտէլը: մարդութիւն երեւում է ամէն մի փողոցում: Կան բաւական լաւ չինութիւններ եւրոպական ճաշակով շինուած: Նոր մասի զարդերից մինն էլ շատ փայլեցնում վա-

ղած աղբերներն են, որոնք և գետից հեռու բնակողներին մեծ դիւրութիւն են տալիս:

Թողնելով օտարազգիները ևս ուղում եմ ձեռք աղբերութիւն տալ իմ նամակներով այստեղի հայերի վերայ, սրանց արհեստների, կենցաղավարութեան և ուսումնարանների վերայ:

Այսպիսով հայերը իրենց օրական պարէնը ձեռք ձգում են գլխաւորապէս երկու միջոցով: արհեստներով և մանրավաճառութեամբ, Առաջինների թիւը աւելի շատ է: Այսպիսիցիւր այս արհեստները բերած են իրենց հետ Երդուրումից և մինչև հիմայ մի և նոյն ընթացքով շարունակում են, այսինքն ասելի իրենց կեանքին և ձեռքերին զօւ տալով քան թէ խելքին և ժամանակի դիւրութիւններին: Գերձակների մի քանիսի մօտ մի միայն գտնվում են այժմեան նոր մեղենները: Չնայելով այդքան դժուարութիւններին մեր արհեստաւորները, այնքան ջերմեանքով և բարեխիղճ են դէպի իրենց արհեստները, որ նրանց մէկ քանիսի ձեռագործները զրեթէ կատարելագործուած են և եւրոպական քաղաքների արուեստահանդէսներում գովասանական թիւթերի և պատուանշանների արժանացած: Ինչ բան որ եւրոպացի 4—5 վարդիտի ձեռքից անցնելով ապա կատարելագործուած է, նոյն բանը Այսպիսյանում մի վարդիտի ձեռքով է լինում: Այն հանգամանքը շատ օտարազգի ճանապարհորդներին դարձացել է, երբ մեր արհեստաւորները իրենց աշխատանքներին և ընտրանքներին հետ ունենային և մեղենները շատ առաջ անցած կլինէին: Այժմ նրանք ձեռագործները տեղական կարտուլիկները լեցնելից յետոյ մեծ քանակութեամբ դնում են Նրեան, Ալեքսանդրօպօլ, Քոթայիս և չրջակայ դիւրեր: Մեր արհեստաւորները հարստանալու երկու պայմանները շատ պիտի պահում են, այսինքն, նրանք սաստիկ աշխատանք են և սաստիկ էլ չարքաշ կեանք են անցնում (քեօլքէթ): Պատ օրերում նրանց ճաշը լինում է սօխից կամ խաչած լուբիայից և հացից, իսկ ընթիքը, յուրեւ ջրից՝ ուտիք օրերում պարբեր կամ մի անգամից ճաշը իսկ ընթիքը, «կախիկից» այն էլ ոչ ամէնքը: Դարբնական մէջ միմիայն կրկնակի օրն է որ մեր արհեստաւորների սեղանը 2—3 տեսակը մտեղին կամ բանջարեղէն կերակուրներով զարդարուած է, բայց հայելով, այս երկու հանգամանքին մեր արհեստաւորները միշտ աղքատ են մնացել:—Ինչի, չուղղութեամբ, բայց մեր խելք արհեստաւորը այդ բարձր չէ էլ հասկանող, նորա և նորա դերդաստանի հազուադէպ կերակուրը, ինչպէս ասացի, շատ պարզ է և գըծուած, նորա ծախսերից եթէ միւրը գտնում են աւելորդ տաէլ նորա քանի՞ ծխախոտի և օրէնը, մէկ երկու ֆինձան: Խմած դանուէն է, որը 4—5 քոր. հազիւ թէ լինի օրը:—Երգիչները, օրագիրներ ստանալը, բայց նա ոչ հասկանում է նրանց արժէքը և ոչ ստանում: Սպասաւորներ և աղախիները պահելը, բայց իւր խանթի տէրն ու սպասաւորը ինքն է և ողբիքը տանը տիրուէն ու աղախիներ նրա կինը ու աղջիկները, թատրոն և այլ դրա նման տեղեր յաճախելը, բայց նա ոչ դրանց նշանակութիւնն է հասկանում և ոչ դընում:

—Հապա ինչ հարցնում ես ինձ, սիրելի ընթերցող.

—Երկու բան, պատմութեամբ եմ ես:

1) Մեր արհեստաւորը բոլոր կեանքը զօհել է իրեն և իրեն բազմաթիւ, միայն որ ու խօշոր անասունները՝ (գերդաստանը) լոկ կերակրելու և հագցնելու:

2) Մեր արհեստաւորը իրեն աշխատանքը, իրեն կեանքը զօհել է իրեն արհեստին յարմար նիւթեր ատաղձներ վաճառող, թիւնաւորին՝ հարստահարութիւններին, այդ բաւի իսկական և ընդարձակ նշանակութեամբ:

Յ. Գ. Կալանձար:

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Միմիարութեան հրամանով ուսմ «ԴՈՐՈՇ» լրագիրը, որը չորս ամսով արդիւնված էր, յունիսի 6-ից կսկսվի նորից հրատարակվել, մի և նոյն խմբագրութեամբ և պայմաններով:

Օգէստայի մէջ կրկին երեցաւ խօշբան:

Ապրիլի 22-ին Ա. Պետրբուրգում հաւաքվեցաւ դաւաճական դէմստիօյի ժողովը: Գաւառական պաշտօնակատարը բացեց նիստը մի ճառով, որտեղ յայտնեց, թէ ընկնելու առաւելանքը պիտի լինի ա) կենդանիների ժամտախտի տարածմանը արգելք դնելու միջոցները, բ) միջոցները գիւղական ժողովրդի մէջ կրթութիւնը տարածելու համար: ինձ հարկաւոր չէ խօսել այն բանի վերա,

առկացեց նախագահն, որքան նշանաւոր են այդ խնդիրները գիւղական ժողովրդի համար:

Թիֆլիսում անցեալ ամսի անտանդի չորովիկնից յետոյ, եղանակը յանկարծ փոխվեցաւ և այժմ գրեթէ ամէն օր անձրեւ է դալիս:

Մօսկովի բարձրագոյն անտանդի հանդէսի կողմէն անտանդի կաղմիկցաւ մի ընթերցարան, որտեղ գտնվում են այն ամեն գրքերը և օրագիրները, որոնք կողմատեմ տեղական ընդունելով հրատարակված են և հրատարակվում են:

Մեզ հաղորդում են Վարդանից, որ մայիսի 30-ն այնտեղի հասարակութիւնը կատարեց մի քաղաքական հանդէս, դա էր Ռուսաց կայսր Պէտրոս մեծի ծննդեան երկու հարիւր տարվայ տարեդարձը որ եղաւ ցերեկով ժողի ալին նորա արձանի մօտ, ինչպէս յայտնի է, Պետրոս կայսրը դալով Վարդանի չինուած է ժողի ալին իբրեւ ժամանակաւոր օխեան մի պարզ և անպաճաճ քարաշէն հիւղ, բաղկացած երկու խոցից, որ մինչև այս օր մընում է, և որին այժմ նորոգել են և դարգաւել:

„Прав. Вѣст.“ հաղորդում է, որ այսուհետեւ Բագուի դաւառը ընդհանուր օրէնքներին կենթարկվի և զինուորական գաւառապետի պաշտօնը պիտի վերցնուի:

„Кавказ“ լրագիրը հաղորդում է „Виржа“ լրագրի խօսքերից, որ հին թղթագրամի փոխանակութեան վերջնական փափակն է ձգվում մի կէս տարով, (երեւ Ռուսաստանի համար):

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պարոն Բաթիֆի ուղեւորութիւնից Պարսկաստանում:

Մերելի ընկեր, դու դրում ես, թէ ստացել ես իմ բոլոր նամակները: Դու դրում ես, թէ նորա շատ հետաքրքրում էին թեղ բաւականին ճիշտ տեղեկութիւններ տալով: Պարսկաստանի մասին, որոց համար մինչև այսօր խիտտ տակաւ խօսնցուել է:

Այս նամակով ես կը ամս քեզ մի քանի տեղեկութիւններ, այն դաւառել հնուցիկներից, որո մէջ դու պիտի կարգաս Պարսկաց-հայոց թշուառ անցնալը:

Անցանկով Պարսկաստանի ամէն մի դաւառները ճանապարհորդը հանդիպում է բերդերի և ամրացների, որոց ումանք վրասակաւ են, իսկ շատերը գետ մտում են ամբողջապէս: Դորա չինուած են, այն ժամանակ, երբ Պարսկաստանի ամէն մի գաւառը կազմում էր միմեկնից անկախ առանձին իւսն ու թիւններ:

Այդ խանութիւնները, միշտ թշուառական յարաբերութեանց մէջ լինելով, պատերազմը նոցա մէջ եղել է անխղիւղ: Յալթօղ կողմը կողոպտում էր յալթուածի կայքը, աւար էր առնում նոցա անասունները, և հուրի էր մատնում նորա բնակարանը: Իսկ յալթուած կողմը շատ անգամ հաղի էր կարողանում իւր կեանքը աղտոնել բերդերում պատարարներով:

Միակ ազգը, որ այդպիսի դժբաղդ դէպքերում դուրկ էր մնում բերդերի ապաստարանից, էր Հայը, որովհետեւ բերդերը հազիւ էին կարողանում իւրեանց մէջ ամրոնել: Թուրքերին և Պարսիկներին:

Երբ ես նստում եմ Չահրի, Կարնիեառուղ, Փիր-Հալուէ, Հաւատար Գողարէն-Կալէ բերդերի վրատակներին Հայի անցնալի այդ դժբաղդ օրերը պատկերանում են իմ աչքի առաջ: Յանկարծ ժամանակը կէս դար յետ է գնում և ես տեսնում եմ Օսման-Աղայ տուրատակը, նա իւր Քուրդ եղուղակներով հեղեղի նման թափվում է այն դաւառի վրայ: Յուսելն-խանը, նոյն ժամանակուայ խոյայ և Սալմաստայ իշխանը, չէ գիմանում Թուրքերի արշաւանքին և իւր Թուրք և Պարսիկ ժողովուրդով ամրանում է բերդերում: Իսկ Հայերը իւրեանց թիւը դուրս թափում են Գուրդերի անդիմութեանը դու:

Օսմանի եղուղակները աւար են առնում Հայերի անասունները, կողոպտում են նոցա կայքը, և դաւառում են, տանելով իւրեանց հետ մի ամբողջ կարաւան բնակաւորուած Հայերի կարած կաւառներով:

Որովհետեւ Օսմանը խոտապել էր իւր եղուղակներին ամէն մի կարած դուրսի համար զին տալ մի հատ ոսկի էջրաֆի, բայց տեսնելով նոցա սարսափելի թիւը, նա զրթում է իւր խոտապելը և վճարում է էջրաֆի տասններորդ մասը:—մի արծաթի դանակ:

Երկրորդ տարին Յուլիան-խառն, հաւաքել լիւր ուժը, յարձակում է Օսմանի վերայ, վերջինը յաղթվում է, այնտեղ ևս պատահում է մի և նոյն անցքը:—Քրտըրը ամրանում են բերքերում, իսկ Հայերը մնում են Յուլիան-խառն անգլիկաններ առաքելայ: Եւ Պարսիկը դառնում է ոչ կարած կառավարում, այլ կենդանի դերինքում, որոյ բոլորը Հայոց մանկահասակ աղջիկներ, և տղերք են լինում Հայրապետ և վանայ կողմերից: Եւ Պարսիկը գիտաւոր մի գեղեցիկ Հայ աղջիկը փոխում էր մի քանի փոփոխ քաջիկ հետ:

Սարմատայ մէջ եղած բերքերից հետաքրքրական է փրչաւուը, որոյ փրչաւուների հետքերն են մնացել այժմ: Սարը, որոյ վերայ շինուած է եղել այդ ամբողջը, ցուցանում է իւր մէջ դանդաղ արհեստական այրեր: Ինձ չը յաջողուցաւ մտանել այդ այրերի մէջ, որովհետեւ գիշերը վերայ հասաւ, բայց որպէս պատմում էր իմ ուղեկիցը, նորա կազմում են լինում մէջ մի խորտաբարդ լաւիւրիւն-թոս, որ շատ հաւանական է, ծառայում էր վերտանդի ժամանակ պահեստի համար:

Մի և նոյն սարի արեւմտեան ճակատում մի տաշած ժայռի վերայ, որոյ մակերևոյթը ունի միջին քանի քառակուսի արշին լայնութիւն, դուրս են փորուած մի քանի արձաններ հակադական մեծութեամբ: Նորա պատկերացում են երկու դիւնուորուած ձիւղեր, որք հայտնու էին երրորդ դին, վերջինը պաշտպանվում է իւր նիւակով և վանամով: Զորորդ ձիւղը, երեկ զարկւելով գետին տապալում է:

Եւ որքան մտածեցի, չը կարողացայ այդ արձաններին տալ մի պատմական ճիշտ նշանակութիւն, որովհետեւ, ոչինչ տառեր չեն երևում, բայց որքան հաւանական է, նորա ներկայացում են մի հզօրի յաղթութիւնը միւսի վերայ: Նոյն հազուադէպ և դէպքերի ձեւերը ցուցանում են հին դարերի յաղթութիւններ, բայց արհեստի ճարտարութիւնը մեծ մասամբ եղծուած է ժամանակի նոսանքին:

Փրչաւուը 10 ժամու ճանապարհ դէպի արեւելք գտնվում է Գոգարին-գաւէ (աղանու բերդ) կողմած ամրոցի փրչաւուները: Նա շինուած է Ռուսիոյ լեւալի միջին դուրս ցցուած մի ապառաժի վերայ, որ ունի մինչև 200 փուտ բարձրութիւն: Այդ ապառաժը բաժանվում է ցամաքէն անձուկ նեղուցով: Գոգարին-գաւէն շինուած է Թաթարներից և նշանակու է իւր անառիկ դրոյթեամբ:

Հնազանդութիւնը այդ բերքերի շինուածքը, նոյն լեռան վերայ ևս դտայ քարայրած մարմիններ ձգելիք, ոտարների և զանազան ծովային դեռուներ: Գորա այնքան խիտ ածած են միմեանց վերայ, որ հազարաւոր քարայրած ձգիներ բաղկացնում են մի ամբողջ մարմին:

Մի ժամանակ Արաբացոյ տիրապետութիւնը, մինչև այսօր թողելով Պարսկաստանում իւր հետքերը, այս գաւառում նոյնպէս ունի մի քանի հոյակապ յիշատակարաններ: Գնալով դեպի Քոհ-նայ-Շահար (Նին քաղաք) տանս վերտ հեռուից ճանապարհորդի աչքերը հրապարում են մուգալիների փայտաշէնը մի գեղեցիկ միմարէթի, որ իրեն Արաբացոյ ճարտարապետութեան պարձանը, հարստութեամբ կանխած է մի ընդարձակ դաշտի մէջ: Պարսիկների տիրապետութիւնը դէպի Սոմալիաների ամէն մի սրբութիւն, մի բարձր բախտով, խնայել է այդ արհեստի հրաշալի դրոյթը, որ ժամանակով երեկ ծառայում էր մուգալիներին *) այդ միմարէթի բարձր գագաթին հրաւիրել աղօթուսէր մուսուլմաններին դէպի Աստուծոյ նամուդը:

Այդ միմարէթից երեք վերտ հեռու մի գաւառ ընդարձակ տարածութիւնը ծածկում է Արաբացոյց գերեզմանատուն: Այդ գերեզմանատան քարերը իւրեանց գեղեցիկ շինուածքով, որ արձանագրուած էին Ղուանի այսթներով, ցուցանում են, թէ Արաբացոյ յարգում էին իւրեանց մուսուլման յիշատակարանը, որոյ ընդ հակառակ Պարսիկների կրօնական մեղադրութիւնը, որ կենդանութեան ժամանակ չեն և նորանց գերի դանդաղան ունուազանութիւնների դէպի Մաշիկ, Մէքքայ, Փարսբայ և այլն:—Ամալից յետոյ չէ թողում նորանց հանգիստ մնալ իւրեանց գերեզմաններում: Ամէն մի չիպի (Պարսիկ) ոսկորները հանուելով գերեզմանից, պիտի կատարէ յիւ մահու ուխտադնացութիւնը դէպի Փարսբայ, և այնտեղ թաղուի Աթաբաթի հողի մէջ, որ սրբուած էր իմամների արկումով: Այդ պատճառաւ Պարսիկները հոգա-

*) Մուսուլման, արաբացոյ լատ. նշանակում է քարոզ—կոչնակ, մզկիթների այն ծառայողները որք կատարում են մեր դանդաղանների մզկիթների պաշտօնը:

չեն տանում փառաբարձերից անտանների համար, այլ իւրեանց ննջեցեցիները միայն առժամանակաւ համար թաղում են ճանապարհների եղեր-քում, որ անցողարձ անողները նոյն հողուն ֆաթայ (հողոց) կարգային: Ահա. այդպիսի դարեւոր պատմական յիշատակութիւնների մէջ տարուեր-րուելով այստեղ Հայերը, երբեմն Պարսիկների, երբեմն Թաթարների, երբեմն Արաբների, և երբեմն Տաթարների բնակաւորութեանց տակ,—մտաւած և ջարդաւորուր կորած Հայերը,—կարցնելով հայրենի երկիր, իշխանութիւն, փառք, միակ սուրբ բանը, որ կարողացան նորա գերծ պահել յարաբարունների հաշտանքներին, է նոյն աղբաշէնութիւնը, իւր ան-փոփոխ կրօնքով, մաքրեցի լիւրտով, և պատմական աւանդութիւններով:

Ողորմելի Հայեր... դո՛ւք, ձեր տաղանդութեամբ և հաստատ ընտարութեամբ դէպի ձեր աղգային առանձնութիւնը, արժանի էք ամենայն կարեկցութեան... Նշու չը սիրել ձեզ...:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մասիս՝ լրագրում կարողութեան հետեւալը, լրագրիւր ունիք կը ծանուցանեն, թէ կաթիլիկ Հայոց Հատենան կուսակցութեան զուգահեռներն ուսուսուոր ընտանիք մի Հայաստանաց կիկոց-այ գիշեր վերադարձած է, և ուղիք քանի մի մեծ ընտանիք ալ նորա օրինակին հետեւելու միտք ունեն: Այսպիսի գիտաւորութեան մի լուր մէք ալ լսեցինք, բայց մինչև այսօր կատարում գտած չէ:

—Նոյն լրագրի էջերի մէջ յետապոյ տեղեկութիւն ենք գտնում: Թէ հրաւիր ենք հեռաղբի մի կը ծանուցանէ. թէ Պարսից վեհ. Շահը Նահաւիւ-Քիւ-Միւլը (բարեկարգիչ պետութեան) տիրաւոր չորհրդէ է հայ ազգի Մեքքայում յանդիմ:

—Յունիսի 11-ին Ֆրանսիայի ազգային ժողովի մէջ ընդունեցաւ զօրքի վերանորոգութեան օրէնքի 37-որդ յօդուածը, այդ յօդուածի զօրութեամբ դիւնուորական ծառայութիւնը պիտի չարունակվի 5 տարի և և ը դ ը ը ա կ ա ն զօրքի մէջ: Իսկ ընդ-գերել 4 տարի: „Le Temps“ լրագրիւր բողոքում է այդպիսի օրէնքի մտցնելուն դէմ: Հասարակագիտական լրագրիւր երբ անդաւանում են:

—Հուսիս պապը շատ ծանր հիւանդ է: Այնուամենայնիւ հաւաքվում են Հոսմ ամեն կողմից հոգեւորականները, որ չնորհաւորեն Պապին նորա 26 տարեկան թագաւորութեան պատճառով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 30-ին տոնելին ամբողջ Ռուսաստանում Պետրոս Մեծի ծննդեան 200 տարեկան տա-րեկարծը:

Անձնատպանութիւն զօրծող գիմագիտանների թիւը Ռուսաստանում օրէցօր բազմանում է: Պէն-զա քաղաքում իրան սպանել է մի գիմագիտ, իսկ նորերում մի և նոյնը պատահեց և Գիմագիտ: Երկուստապը շատ աշխատեց որ վերջին հարցա-քնութիւնը տայ:—բայց դարձեալ նորան յայտն-վեցաւ գիմագիտի վարդապետի, որ նա վկայա-կանը չէ կարող ստանալ: Միւս օրը երկուստապը սպանեց իրան:

Նորերում հրատարակեցաւ Թիֆլիսում պ. Ջէյ-դիլիցի խմբագրութեամբ „Сборн. Свѣд. о Кав-казѣ“ երկրորդ հատորը:

Մեր անցիկ համարի մէջ տրւած Զաքարիայի նամակումը ստված է որ Զաքարիայում „Մշակը“ 7 բաժանարդ ունի, „Արարատ“ 6, իսկ „Միզուր“ 4: Մենք միայն „Մշակի“ մասին կանխը թէ նա-մակալիւր միմով սխալվել է: Զաքարիայում „Մշ-ակ“ ունի 8 բաժանարդ: Գիտաւորութիւն ունեցը շուտով կարգաւորներին ներկայացնել թէ ընդհա-նուր բաժանորդների թիւը, թէ ինչպէս նորա դա-տաւորված են քաղաքներում:

Պ. Կէտլէի դրել մէջ, գտնում ենք պ. Կատ-պերի յետապոյ հետաքրքիր Ռուսաշանները մարդի կեանքի միջին տեղաւորման վերայ, իմէ 100 մարդ ինկներից հաշուեն նոյն, որոնք հասնում են 70 տարեկան հասակին:

100 հողեւորականներից 42 հասնում են 70 տա-րեկան հասակին, մի և նոյն թիւի բարձր պաշտօ-նականներից միայն 35, վաճառականներից 35, դի-նուորականներից 32, ստորին պաշտօնականներից 32:

Փաստաբաններից 29, արհեստագէտներից 28 մարդ, վարժապետներից և պրոֆեսորներից 27, իսկ բը-ժիկներից միայն 24 մարդ: Սորանից երեւում է որ նորա որոնք իրան համար հանգիստ, հսկան կեանք են վարում ամենից երկար են ապրում, իսկ ա-մենից փոքր ապրում են աշխատող մարդիկ, նոյն որոնք հոգում են իրանց կղբայրների մասին...:

Պատմում են որ նորերում մի օտարազգի դիտ-նական, որ հայերէն էլ գիտէ, այցելութիւն է ա-նում մի հայոց վանքի մէջ: Նա ծանոթանում է մի երկուստապը վարդապետի հետ և սկսում է նո-րա հետ հայերէն խօսել... Ինչ էք կարծում, ինչ լիւրով պատասխան է տալի վարդապետը,—քանի օտարազգին աշխատում է հայերէն խօսել, այն-քան հայ վարդապետը պատասխանում է նորան Ֆրանսիկերէն...:

„KABAST“ լրագրիւր տալի է մի հետաքրքիր նամակագրութիւն Էջմիածնից, Կան չէ լի տնու-նով ստորագրված: Նամակի նիւթը Ս. Միւսոնի օրհնութեան հանդէսի նկարագրութիւն է, որը ինչպէս յայտնի է կատարվում է մեզանում իւրա-քանիւր 7 տարի, այն ինչ այս անգամ ժամա-նակամիջոցը աւելի կարճ էր, որովհետեւ Ս. Միւ-սոնը հատել էր: Նամակագիրը հարգողութե մի հետաքրքիր փաստ, այն է որ շատ աղջկիւր կային, որոնք տղա-մարդի չորհրով եկել էին հանդէսին ներկայ գտնվելու: Նոյնպիսի շատերը Պարսկաստա-նից եկած էին, և ինչպէս իրանը մեկնեցին կրօ-նական եռանդով վառված լինելով, գործը դրին այդ անմեղ խորամանկութիւնը որովհետեւ չէին ստանում ծնողներից թոյլտւութիւնը իրանց ուխտը կատարելու համար:

ԹԻՖԼԻՑԻ ՓՕՍՏԸ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ	Ռուսաստան, Արտասահման, Գու-թայի, Գարրանդ և Երևանի գա-ւառը:
ԵՐԿՐՇԱՐԹԻ	Բաղու, Գանջա, Շուշի, Շամախի:
ԶՈՐԵՔՇԱՐԹԻ	Գութայի, Ռուսաստան, Արտա-սահման, Երևան, Ախալցխա Գար-րանդ:
ՀԻՆԿՇԱՐԹԻ	Ռուսաստան, Արտասահման:
ՈՒՐԿԱՐԹ	Գութայի, Երևան, Ախալցխա Զաքարիայ, Նուխի:
ՇԱՐԱՐԹ	Բաղու, Ռուսաստան, Արտասահ-ման, Գարրանդ, Գանջա:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՅԱԿԱ-ԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(յունիսի 15-ին):

ՈՍԿԻՆ, (պօլիտեխնիկ)	6	8	4
ՓՈՒՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլս:			
Վճարելիք (Լիւրա Օսմանեան)	6	70	„
ԲԱՄԲԱԿ Երևանում	5	30	—
„ Ամերիկայի սերմից	6	30	—
ԹԱՄԲԱՐՈՒ Տրապիզոնի անդը	12	—	—
ՇԱՔԱՐԸ Ռաի (Բրեյկու)	8	60	„
„ „ միւս տնակը	8	50	„
„ զաքարիայի տրանցիլ	5	60	„
մարք վճարած	8	75	„
ՇԱՔԱՐԱՍԱՐԸ Ռաի	8	10	„
ԲՈՒՐԻԹ Թուշի	9	—	—
„ Թարեքեամի	7	50	„
ՂԱՀՂԱ Լիւանի լաւ	13	50	„
„ Մարտինիկայի ցածրը	12	—	—
„ Մօկո, շատ լաւ	14	50	„
ՂԱԳԱԸ	11	50	„
ԵՐԿԱՐ	2	20	„
մինչև	3	50	„
ՄՈՄ	12	—	—
ԱԼԻԻՐԸ կրուպչատկայ Ռու-սաստանի բերքը փութը	3	60	„
ԱԼԻԻՐԸ կրուպչատկայ Ավիւր-դեանի տեղական Զաքարիայ(Կե-անջալում)	№ 1 փութ	3	20
„	№ 2	2	40
„	№ 3	2	10
ԱԼԻԻՐԸ Գանջաու հասարակ	1	50	„
„ Շարաքաւու	1	35	—

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(յունիսի 3-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ուսուրի ամէ 32²⁷/₃₂ պէնս (փոխա-նակ 40 պէնս):

ՓԱՐԻՉ.—մի ուսուրի ամէ 348¹/₄ սանտիմ (փո-խանակ 400 սանտիմ):

Աւաջին ներքին 5% փոխաւորութեան տոմսով 154¹/₂ Երկրորդ 152¹/₂

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօլալի նոր փողոցումը, Գա-րադալոյէ պրավէնիայի դեմուդէմ „Café restaurant de Paris“ Հիւրանոցումը կարելի է վարձել սենեակներ ըն-տիր մեօբով օրական 3 ուսուրը մինչև 1 ուսուրի, իսկ ամսով վար-ձողներին կը լինի զեջումը:

Սենեակները կարելի է վարձել ճաշով և առանց ճաշի: Ճաշը եր-կու կերակրից բաղկացած արժէ ամիսը 10 ուսուրի, իսկ երեք տե-սակից—ամիսը 15 ուսուրի: Կարելի է ճաշ ստանալ և տոմսակներով հե-տեւալ գներով:

Մի ճաշը երկու տեսակ կերակ-րից մի գաւաթ սուրճով և կէս չիշ գինով արժէ... 60 կ.

Մի ճաշ երեք տեսակ կերակրից, մի գաւաթ սուրճով և կէս չիշ գինով արժէ... 80 կ.

Իսկ մի ճաշը չորս տեսակ կե-րակրից, մի գաւաթ սուրճով, և կէս չիշ գինով արժէ ... 1 ո.

Իւր կողմից Հիւրանոցի տէրը համոզված լինելով, որ չէ կարող ամեն ճաշակի բաւականութիւն տալ, չէ կամենում մեծամեծ խոստում-ներ տալ իւր ներկայ և ապագայ այցելուներին:

Կլասիկական գիմնազիայի 7-րդ դասատան մի աշակերտ յանձն է առնում պատրաստել երեսայոց եր-կու գիմնազիոնի առաջին չորս դա-սատանց համար, և տալիս է նոյն-պէս սուանձին գասեր:

Հարցնել պ. Աւետիք Էջմիա-ճեանի և Ալադաթեանի գրավա-ճառանոցներում:

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ

Մեծ. պ. Վասիլ Խօջայեանցի „ճա-նապարհորդութիւն Վէրուվ հրա-բուլիս սարի վերա“ Սա մի հետա-քրքիր ճանապարհորդութիւն է Ի-տալիայի մէջ:—Ծախվում է յօգուտ Ս. Մարիամեան ծխական ուսում-նարանի: Յանկացողները թող դի-մեն „Մշակի“ խմբագրութեանը: